ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

նոյեմբերի 2021 թվականի № Ա
ք. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի №367Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշումը և հաշվի առնելով «ՊԱՐԳԵՎ ԵՎ ՎԱՐԴԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի հոկտեմբերի 27-ի №2 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Տասնհինգ տարի ժամկետով երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 29-ի «ՊԱՐԳԵՎ ԵՎ ՎԱՐԴԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Զոր-Զոր ՀԷԿ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №367Ա որոշմամբ «ՊԱՐԳԵՎ ԵՎ ՎԱՐԴԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «Զոր-Զոր ՀԷԿ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության №0229 լիցենզիայի գործողության ժամկետը ՝ որոշման՝

1) 1-ին կետում «15 տարի» բառերը և 2-րդ կետով հաստատված հավելվածի 3-րդ կետում «մինչև 2021 թվականի դեկտեմբերի 29-ը» բառերը փոխարինելով «մինչև 2036 թվականի դեկտեմբերի 29-ը» բառերով,

2) 1-ին կետում «Վաղատին համայնքի վարչական տարածքում՝ Վաղուտ (Զոր Զոր) գետի վրա» բառերը փոխարինելով «Սիսիան համայնքի վարչական տարածքում (գյուղ Վաղատին)՝ Որոտան գետի Վաղուտ վտակի վրա» բառերով, իսկ 2-րդ կետով հաստատված հավելվածի 5-րդ կետում «Վաղուտ (Զոր Զոր) գետի վրա» բառերը՝ «Որոտան գետի Վաղուտ վտակի վրա» բառերով:

2. «ՊԱՐԳԵՎ ԵՎ ՎԱՐԴԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ «Էներգետիկայի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետով սահմանված տասնհինգ տարվա ժամկետը «ՊԱՐԳԵՎ ԵՎ ՎԱՐԴԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Զոր-Զոր ՀԷԿ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի համար ավարտվում է 2021 թվականի դեկտեմբերի 29-ին:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի դեկտեմբերի 29-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
նոյեմբերի 2021թ.